

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՏԱՇԵՍ ԱՆՏՈՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՄԱՔՍԱ-  
ՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 203-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հոկտեմբերի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Ն. Դանիելյանի,  
Ֆ. Թոխյանի, Վ. Նովիանիսյանի, Մ. Թովուզյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,  
մասնակցությամբ՝  
դիմող Ա. Անյունյանի,  
գործով որպես պապասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,  
համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական  
դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,  
դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արտաշես  
Անյունյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի՝  
Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության  
հարցը որոշելու վերաբերյալ» գործը:  
Գործի քննության առիթը Ա. Անյունյանի՝ 03.05.2010թ. ՆՏ սահմանադրական  
դատարան մուտքագրված դիմումն է:  
Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր  
բացատրությունները, հերագոտելով ՆՏ մաքսային օրենսգիրքը եւ գործում առկա  
մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական  
դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց.**

1. ՆՏ մաքսային օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000 թվականի հուլիսի 6-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի օգոստոսի 9-ին եւ ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի 1-ից:

ՆՏ մաքսային օրենսգրքի՝ «Ապրանքները եւ փրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ դրանց հայտարարագրելը ոչ իրենց անվանմամբ» վերաբառությամբ վիճարկվող 203-րդ հոդվածը սահմանում է. «Նայաստանի Նանրապետության մաքսային սահմանով փեղափոխվող ապրանքները եւ փրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ փեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը, ինչպես նաեւ հայտարարագրումը ոչ իրենց անվանմամբ՝ հանցագործության հարկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է փուզանքի նշանակում՝ այդ ապրանքների եւ փրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով»:

2. Գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետևյալին: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի անվամբ 21.10.2006թ. թիվ 264724 եւ 264726, 24.10.2006թ. թիվ 264820, 26.10.2006թ. թիվ 2647867 փոխադրման ամփոփագրերով Ռուսաստանի Դաշնությունից Նայաստանի Նանրապետություն է ներմուծվել «Ֆլորոմաշինա» անվանումը կրող լեռնահանքային սարքավորում: Վերջինիս հայտարարագրումն իրականացրել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի լիազոր ներկայացուցիչ Արփաշես Անփոնյանը՝ 30.10.2006թ. թիվ C 3883 բեռնային մաքսային հայտարարագրով:

ՆՏ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետք՝ ՊԵԿ) կողմից Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի անունով սկսած 2006թ. ներմուծված եւ ԱԱՏ-ի զրոյական դրույքաչափով կատարված մաքսային ձեւակերպումների օրինականության ուսումնասիրության արդյունքում 30.07.2008թ. կազմվել է համապատասխան փեղեկանք: 17.10.2008թ. ՊԵԿ հետաքննության բաժնի հետաքննիչի կողմից կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն: 27.10.2008թ. ՊԵԿ հետաքննության եւ իրավաբանական վարչության պետի կողմից կայացվել է «Քրեական գործի հարուցումը մերժելու եւ վարչական փույժ նշանակելու մասին» որոշում, որով Արփաշես Անփոնյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ արարքում հանցակազմի բացակայության պարճառով, եւ միաժամանակ Արփաշես Անփոնյանը ճանաչվել է զանցառու ՆՏ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով եւ փուզանվել

հաշիվ-ապրանքագրային արժեքի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրված «Ֆլուորմաշինա» տեսակի լեռնահանքային սարքավորումների մաքսային արժեքի՝ 579.506.236,48 ՆՏ դրամի չափով: Դա տեղի է ունեցել այն բանի արդյունքում, երբ 17 վագոն ապրանքաբեռից ստանալով 15 վագոնը՝ 1.461.176 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, այն մաքսագերծվել է դեռևս չստացված 2 վագոն ապրանքաբեռի՝ 194.823 ԱՄՆ դոլար գումարի չափով:

22.12.2008թ. դիմողը հայցադիմում է ներկայացրել ՆՏ վարչական դատարան՝ ընդդեմ ՊԵԿ-ի՝ ՆՏ ԿԱ ՊԵԿ հեղափոխության եւ իրավաբանական վարչության պետի՝ 27.10.2008թ. «Քրեական գործի հարուցումը մերժելու եւ վարչական պույժ նշանակելու մասին» որոշումը մասնակի՝ վարչական պույժ նշանակելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին:

19.01.2009թ. ՊԵԿ-ը հայցադիմում է ներկայացրել ՆՏ վարչական դատարան՝ ընդդեմ Արտաշես Անտոնյանի՝ վերջինից պետական բյուջե գանձվող փողերի եւ պետական փողերի գումարների բռնագանձման պահանջի մասին:

ՆՏ վարչական դատարանի՝ 26.02.2009թ. որոշմամբ վերոնշյալ երկու վարչական գործերը միացվել են մեկ վարույթում: ՆՏ վարչական դատարանի՝ 28.08.2009թ. կայացված վճռով (վարչական գործ թիվ ՎԴ/7499/05/08) ՊԵԿ-ի հայցը բավարարվել է, իսկ Արտաշես Անտոնյանի հայցը՝ մերժվել: Դիմողի հայցը մերժելով՝ ՆՏ վարչական դատարանը, հղում կատարելով ՆՏ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածին, նշել է. «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի լիազորված անձ Ա. Անտոնյանի կողմից թույլ է տրվել ՆՏ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված իրավախախտումը, քանի որ վերջինս հանդիսանալով ընկերության ներկայացուցիչը՝ ՆՏ տարածք ներմուծված վերոհիշյալ լեռնահանքային սարքավորումները հայտարարագրել է 194.823 ԱՄՆ դոլար արժեքով, հաշիվ-ապրանքագրում նշված 1.461.176 ԱՄՆ դոլարի փոխարեն»:

Արտաշես Անտոնյանը 28.08.2009թ. թիվ ՎԴ/7499/05/08 վճռի դեմ ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը ՆՏ վճռաբեկ դատարանի՝ 04.11.2009թ. որոշմամբ վերադարձվել է:

3. Դիմողը գտնում է, որ ՆՏ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը հակասում է ՆՏ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ հոդվածներին՝ այն պատճառաբանությամբ, որ վիճարկվող հոդվածը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, ինչի արդյունքում իրավակիրառական պրակտիկայում դրան տրվել է կամայական մեկնաբանություն: Այդ պնդումը դիմողը հիմնավորում է նրանով, որ ՆՏ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը հստակորեն չի սահմանում, թե որ գործողություններն են

ներառվում «ճշգրիտ փեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու զանցակազմի մեջ», չի հստակեցնում, թե մեղքի որ ձևի դեպքում է պարասխանավորությունը ծագում՝ դիտավորության, թե՝ անզուգույթության, եւ դրանցից յուրաքանչյուրի դեպքում չի փարբերակում պարասխանավորության չափը: Բացի դրանից, դիմողը գտնում է, որ ՏՏ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը հակասում է նաեւ ՏՏ Սահմանադրության 8-րդ հոդվածին՝ անհամաչափ պարասխանավորության միջոց նախատեսելու փեսանկյունից: Դիմողը նշում է, որ վիճարկվող հոդվածը նույն հարթության վրա է դիտում որակապես փարբեր իրավախախտումներ եւ դրանց համար նախատեսում է պարասխանավորության միեւնույն չափ՝ վերջինս պայմանավորելով փեղափոխվող ապրանքների կամ փրանսպորտային միջոցների մաքսային արժեքով:

Դիմողի պնդմամբ՝ ՏՏ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը հակասում է նաեւ ՏՏ Սահմանադրության 5-րդ հոդվածին՝ իրավակիրառական պրակտիկայում դրան փրված մեկնաբանության իմաստով: Այդ հակասությունը, ըստ դիմողի՝ դրսևորվում է նրանում, որ պրակտիկայում հաճախ մաքսային մարմինները քրեական եւ վարչական վարույթներն իրականացնում են միաժամանակ, եւ այդ վարույթների արդյունքներն ամփոփվում են մեկ ընդհանուր որոշմամբ:

4. Ըստ պարասխանող կողմի՝ վիճարկվող իրավադրույթը կիրառելիս իրավական որոշակիության խնդիր չի առաջանում: Դիմողի իսկ փաստարկները վկայում են, որ վիճարկվող նորմն իրավակիրառողի կողմից ընկալվում եւ մեկնաբանվում է միատեսակ:

Պարասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմի հակասահմանադրականության առնչությամբ դիմողն իր դիմումը հիմնավորում է բացառապես իրավակարգավորման նպարակահարմարության վերաբերյալ մոփեցումներ ներկայացնելով՝ չհիմնավորելով վիճարկվող նորմի եւ ՏՏ Սահմանադրության միջեւ առկա որեւէ հակասություն: Այսինքն՝ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է իրավադրույթով փրված իրավակարգավորման եւ փվյալ իրավակարգավորմամբ իր նկարմամբ առաջացած հեփեւանքների իրավաչափության հարց:

Վկայակոչելով ՏՏ սահմանադրական դարարանի մի շարք որոշումներ, մասնավորապես՝ ղեկավարվելով «Սահմանադրական դարարանի մասին» ՏՏ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կեփով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, հիմնվելով 17.03.2009թ. ՍԴԱՌ-21, 23.03.2010թ. ՍԴՌ-870 եւ 24.11.2009թ. ՍԴՌ-839 որոշումներում ՏՏ սահմանադրական դարարանի կողմից արարահայրված իրավական

դիրքորոշումների վրա՝ պարասխանող կողմը միջնորդություն է ներկայացրել կարճել սույն գործի վարույթը:

Սահմանադրական դատարանը միջնորդության քննության արդյունքում այն չի բավարարել:

**5.** ՏՏ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենսդրի բացառիկ իրավասությանն է վերապահված ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պարտականությունների եւ պարասխանավորության փեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանումը: Իր այդ լիազորությունն իրականացնելիս օրենսդիրն ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պարասխանավորության, վարչական պարասխանավորության ենթակա սուբյեկտների շրջանակը, սահմանում է վարչական պարասխանավորության միջոցներն ու չափերը: Նշված հարցերում օրենսդրի հայեցողությունը, սակայն, ունի իր սահմանադրական շրջանակները, եւ օրենսդիրն իր նշված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է առանձին սահմանադրական սկզբունքներով: Օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես, ՏՏ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 43-րդ հոդվածներում: Սահմանադրության նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ դրանց իրավական բովանդակությունը, ի թիվս այլոց, հանգում է նրան, որ հանրային իշխանության իրականացումը նախեւառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է ընդհանրապես իրավաբանական պարասխանավորության եւ, մասնավորապես՝ վարչական պարասխանավորության հիմքում ընկած կարեւորագույն սկզբունքներից մեկը, որի ապահովման փեսանկյունից էլ նախեւառաջ անհրաժեշտ է գնահատել վիճարկվող նորմի սահմանադրականությունը:

Խնդրո առարկա սահմանադրաիրավական վեճի համարեքստում համաչափության սկզբունքը պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պարասխանավորության միջոցի ու չափի եւ պարասխանավորության սահմանամբ հերապնդվող իրավաչափ նպատակի միջեւ:

Տվյալ դեպքում վիճարկվող նորմով սահմանված վարչական պարասխանավորությունն իրավաչափ նպատակ է հերապնդում ապահովել ՏՏ

Սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանված՝ փուրքեր մուծելու՝ անձանց սահմանադրական պարտականության կարարումը:

Ինչ վերաբերում է նշված իրավազափ նպատակի եւ վիճարկվող նորմով սահմանված պարասխանավորության միջեւ համաչափության գնահատմանը, ապա այդ նպատակով սահմանադրական դարարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմը դիտարկել ՆՏ մաքսային օրենսգրքի՝ «Մաքսային կանոնների խախտումները եւ պարասխանավորությունը դրանց համար» վերառությամբ 37-րդ գլխի նորմերի հետ համակարգային ամբողջականության համապատասխանում:

6. Մաքսային օրենսգրքի՝ «Մաքսային կանոնների խախտումները եւ պարասխանավորությունը դրանց համար» վերառությամբ 37-րդ գլխի նորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մաքսային կանոնների խախտման երկու հիմնական խումբ.

ա. մաքսային կանոնների խախտումներ, որոնք չեն առնչվում պետության ֆինանսական շահերին, մաքսային վճարների վճարման պարտականության կարարմանը, ինչպես նաեւ այդպիսի պարտականության կարարման ապահովմանը (օրենսգրքի 190-199.1-րդ հոդվածներ),

բ. մաքսային կանոնների խախտումներ, որոնք անմիջականորեն վերաբերում են պետության **ֆինանսական շահերին եւ նպատակաուղղված են մաքսային վճարների վճարման պարտականության կարարման ապահովմանը** (օրենսգրքի 200-204-րդ հոդվածներ): Դրանք վերաբերում են, մասնավորապես, մաքսային սահմանով ապրանքների եւ փրանսպորտային միջոցների տեղափոխմանը՝ մաքսային հսկողությունը շրջանցելով, մաքսային հսկողությունից թաքցնելով, ապրանքները եւ փրանսպորտային միջոցները չհայտարարագրելով, մաքսային եւ այլ փաստաթղթերը կամ մաքսային ապահովման միջոցները խաբեությամբ օգտագործելով: Նշված իրավախախտումների դեպքում այդ չափով չեն ապահովվում փյալ ապրանքների եւ փրանսպորտային միջոցների կամ դրանց առանձին խմբաքանակի մասով մաքսավորքերի, օրենքով սահմանված հարկերի, փուրքերի եւ այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը:

Պայմանավորված իրավախախտումների վերոհիշյալ առանձնահատկություններով՝ ի տարբերություն օրենսգրքի 190-199.1-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների, օրենսդիրն օրենսգրքի 200-204-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների համար պարասխանավորության չափը հավասարեցրել է ապրանքների եւ փրանսպորտային միջոցների մաքսային արժեքին: Բացի

դրանից, օրենսգրքի 200-204-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների համար պատասխանատվության առանձնահատկություններից է նաև այն, որ օրենսդիրը, ելնելով նշված հոդվածներով պահպանվող արժեքների կարեւորությունից եւ դրանով պայմանավորված՝ հեղափոխվող իրավաչափ նպատակից, վարչական պատասխանատվություն նախատեսում է միայն հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես վիճարկվող նորմում, այնպես էլ օրենսգրքի 200-202-րդ եւ 204-րդ հոդվածներում քրուզանքի չափն ապրանքների կամ փրանսպորտային միջոցների մաքսային արժեքով պայմանավորելն իրավաչափ է եւ արդարացված է այդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությամբ հեղափոխվող իրավաչափ նպատակով, այն է՝ ապահովել ՏՏ Սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանված՝ հարկեր, փուրքեր եւ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտականության երաշխավորված կատարումը:

7. Վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթը դիտարկել այդ նորմի իրավակարգավորման առարկայի եւ օրենսգրքի 200-202-րդ եւ 204-րդ հոդվածների ընդհանուր փրամաբանության լույսի ներքո:

Այդ նորմերի վերլուծությունը վկայում է, որ դրանցում նշված բոլոր իրավախախտումների դեպքում փաստացիորեն փեղի է ունենում ապրանքների կամ դրանց որոշակի խմբաքանակի չհայտարարագրում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 200-202-րդ եւ 204-րդ հոդվածների իմաստով «չհայտարարագրել» հասկացության ներքո օրենսդիրը նկատի է ունեցել ոչ միայն ապրանքները եւ փրանսպորտային միջոցներն ընդհանրապես չհայտարարագրելը (օրենսգրքի 200 եւ 201-րդ հոդվածներ), այլ նաև ապրանքների եւ փրանսպորտային միջոցների այնպիսի **հայտարարագրումը**, որը զուգորդվում է մաքսային մարմին մաքսային հսկողության եւ մաքսային ձեւակերպման համար կեղծ, անօրինական ճանապարհով ստացված, անվավեր համարված կամ այլ ապրանքներին եւ փրանսպորտային միջոցներին վերաբերող փաստաթղթեր ներկայացնելով, կեղծ մաքսային ապահովման միջոցներ օգտագործելով, ինչպես նաև առանց մաքսային մարմինների թույլտվության՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ ունեցող ապրանքների եւ փրանսպորտային միջոցների օգտագործմամբ, փնօրինմամբ եւ այդ

արտոնություններով չպայմանավորված նպատակներով այլ անձանց հանձնելով (օրենսգրքի 202 եւ 204-րդ հոդվածներ): Վերջին դեպքերում եւս փաստացիորեն տեղի է ունենում կոնկրետ ապրանքների եւ փրանսպորտային միջոցների կամ դրանց կոնկրետ խմբաքանակի **չհայտարարագրում**: Ընդ որում, նշված իրավախախտումներն իրենց իրավական հետեւանքներով այնպիսին են, որ դրանց կատարման դեպքում այդ չափով չեն ապահովվում փվյալ ապրանքների եւ փրանսպորտային միջոցների կամ դրանց առանձին խմբաքանակի մասով մաքսափուրքերի, օրենքով սահմանված հարկերի, փուրքերի եւ այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը:

Վիճարկվող նորմի վերլուծությունը թույլ է փալիս եզրահանգել, որ այդ նորմով նախատեսված իրավախախտման, այն է՝ ապրանքների եւ փրանսպորտային միջոցների չհայտարարագրման դրսեւորման երկու ձեւերի համար էլ օրենսդիրը, հետեւողական մոտեցում ցուցաբերելով օրենսգրքի 200-202-րդ եւ 204-րդ հոդվածների փրամաքանությանը, նկատի է ունեցել հայտարարագրման կանոնների այնպիսի խախտումներ, որոնք հանգեցնում են կոնկրետ ապրանքների եւ փրանսպորտային միջոցների կամ դրանց կոնկրետ խմբաքանակի չհայտարարագրմանը: Այսինքն՝ Նայաստանի Նանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ փրանսպորտային միջոցների չհայտարարագրման կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրման դեպքում եւս չի ապահովվում փվյալ ապրանքների եւ փրանսպորտային միջոցների կամ դրանց առանձին խմբաքանակի՝ այդ չափով մաքսափուրքերի, օրենքով սահմանված հարկերի, փուրքերի եւ այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը՝ միատեսակ դարձնելով դրանց հասարակական վրանգավորության աստիճանը:

Տիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 200-204-րդ հոդվածների սահմանմամբ օրենսդրի նպատակը վարչական պարասխանափութություն սահմանելն է ոչ թե Նայաստանի Նանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ փրանսպորտային միջոցների չհայտարարագրման դրսեւորման բոլոր դեպքերի համար, այլ միայն այն դեպքերի, որոնց հետեւանքով չի ապահովվում կոնկրետ ապրանքի եւ փրանսպորտային միջոցի կամ դրանց առանձին խմբաքանակի՝ այդ չափով մաքսափուրքերի գծով պետական բյուջեի մուտքերը: Քննության առարկա գործի շրջանակներում 1.461.176 ԱՄՆ դոլար գումարի ապրանքաբեռի փոխարեն մաքսափուրք է վճարվել 194.823 ԱՄՆ դոլար ապրանքաբեռի դիմաց: Սահմանադրաիրավական առումով համոզիչ չէ այն



հանգամանքը, որ այս հարցում բացառվել են հանցակազմի հարկանիշները եւ պահանջներ չեն ներկայացվել իրավաբանական անձին:

Այսուհանդերձ, վերոհիշյալ համակարգային վերլուծությունը վկայում է, որ վիճարկվող դրույթում «ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձեւով չհայտարարագրել» բացահայտիչ միջանկյալ ձեւակերպման ներքո **տվյալ հոդվածի իրավակարգավորման առարկայի շրջանակներում պեք է նկատի ունենալ Նայաստանի Նանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ փրանսպորտային միջոցների մասին այնպիսի ոչ ճշգրիտ տեղեկություններ հայտարարագրելը, որը գործնականում հանգեցնում է իրական բեռի չհայտարարագրման**, ինչի մասին վկայում է նաեւ սույն գործին առնչվող դատավարական նախապատմությունը: Ընդ որում, նշված նորմում ճշգրիտ տեղեկությունների ներքո նկատի են առնվում ՏՏ մաքսային վարչության՝ 1998թ. հունիսի 12-ի թիվ 71-ՄՎԸ հրամանով նախատեսված միայն այն **տեղեկությունները, որոնց ոչ ճշգրիտ հայտարարագրումն իր** իրավական հետեւանքներով հավասարագոր է մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները կամ փրանսպորտային միջոցները հայտարարագրելու պարտականությունը չկատարելուն, այսինքն՝ հանգեցրել է մաքսային պարտավորության չկատարմանը, կամ որ նույնն է՝ դրանց հետեւանքով չեն ապահովվել կոնկրետ ապրանքի եւ փրանսպորտային միջոցի կամ դրանց առանձին խմբաքանակի՝ այդ չափով մաքսատուրքերի, օրենքով սահմանված հարկերի, փուրքերի եւ այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը:

**Միայն վիճարկվող նորմի նման ընկալումը կարող է համապատասխանել սույն հոդվածի իրավակարգավորման փրանսպորտային ու նպատակին:**

Միաժամանակ, նկատի ունենալով, որ վիճարկվող նորմում՝ «այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձեւով չհայտարարագրելը» արտահայտությունը կարող է թույլ տալ նորմի այնպիսի մեկնաբանություն, ըստ որի՝ վիճարկվող նորմով նախատեսված պարտասխանաբարությունը կարող է կիրառվել նաեւ հայտարարագրման սահմանված կարգից ցանկացած շեղման դեպքում՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմով նախատեսված արարքի համար անձի վարչական պարտասխանաբարությունն իրավաչափ է միայն այն դեպքում, երբ այդ պարտասխանաբարությունը նպատակաուղղված է մաքսային պարտավորությունների կատարումն ապահովելու՝ վերը նշված իրավաչափ նպատակին հասնելուն: Ներելաբար, այն դեպքում, երբ տեղափոխվող ապրանքի կամ փրանսպորտային միջոցի մասին ճշգրիտ տեղեկություններ

չհայրարարագրելը չի հանգեցրել ապրանքի կամ փրանսպորտային միջոցի մաքսային արժեքի նվազեցմանը եւ ըստ այդմ չի հանգեցրել օրենքով սահմանված կարգով եւ չափով մաքսատուրք վճարելու սահմանադրական պարտականության ոչ պարզաճ կատարմանը, նշված արարքի համար պարասխանավությունը՝ վիճարկվող նորմով սահմանված չափով, դառնում է ինքնանպարակ եւ չի բխում վիճարկվող նորմի ընդհանուր իրավակարգավորման առարկայից:

8. ՆՏ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածը սահմանում է ապրանքները եւ փրանսպորտային միջոցները հայրարարագրելու ընդհանուր պարտականությունը: Ըստ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ մասի՝ այդ պարտականությունը կրող սուբյեկտ է հանդիսանում հայրարարատու: Նամաձայն ՆՏ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի՝ որպես հայրարարատու կարող է հանդես գալ ապրանքներ փեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 9, 32 եւ 279-րդ հոդվածների համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ վարչական պարասխանավության սկզբունքներից է «պարասխանավությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական փույժը (պարասխանավությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Այդ սկզբունքն է ընկած նաեւ մաքսային կանոնների խախտման համար պարասխանավության հիմքում: Մասնավորապես, ՆՏ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական եւ պաշտոնավար անձինք մաքսային կանոնները դիտարկող կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պարասխանավության:

Ներելաբար՝ **մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր փարր**, հանդիսանում է վարչական պարասխանավության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաեւ վարչական պարասխանավության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պարասխանավության սկզբունքին, որի համաձայն անձը ենթակա է պարասխանավության միայն անձամբ կատարած իրավախախտման համար:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պարտավոր է, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, պարզել լիազորված անձի, լիազորողի եւ փեղափոխողի մեղքի առկայությունը՝ ըստ այդմ որոշելով պարասխանատու սուբյեկտին: Նաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորված

անձը գործում է փեղափոխողի անունից եւ ի շահ վերջինիս՝ համապատասխան ակտի հիման վրա փրամադրված լիազորությունների շրջանակներում, եւ հայտարարագրումն իրականացնում է փեղափոխողի փրամադրած փեղեկապվության հիման վրա՝ այդ լիազորությունների շրջանակներում կատարած ցանկացած գործողության համար վիճարկվող դրույթով սահմանված պատասխանատվության սուբյեկտ պետք է հանդիսանա փեղափոխողը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձեւավորված իրավակիրառական այն պրակտիկան, երբ չապահովելով իրավախախտման համար մեղավորի պատասխանատվությունը եւ բոլոր դեպքերում որպես պատասխանատվության սուբյեկտ դիտարկելով փեղափոխվող ապրանքների կամ փրանսպորտային միջոցի նկատմամբ որեւէ գույքային իրավունք չունեցող լիազորված անձին, թույլ չի փախսարդյունավետորեն իրացնել վիճարկվող նորմով սահմանված պատասխանատվության իրավաչափ նպատակը, այն է՝ ապահովել փնտեսավարող սուբյեկտի կողմից՝ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված պարտականության իրական կատարումը:

Այս խնդրի իրավակարգավորումը հետագա համակարգային բարեփոխման անհրաժեշտություն ունի:

9. Ինչ վերաբերում է վիճարկվող նորմի՝ ՆՆ Սահմանադրության 5-րդ հոդվածին ենթադրյալ հակասության վերաբերյալ դիմողի պնդմանը, ապա այդ առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի մատնանշած՝ մաքսային մարմինների կողմից քրեական եւ վարչական վարույթների միաժամանակյա իրականացման եւ այդ վարույթների արդյունքները մեկ ընդհանուր որոշմամբ ամփոփելու խնդիրն ինքնին ՆՆ մաքսային օրենսգրքի վիճարկվող նորմին չի առնչվում:

Բացի դրանից, 2009-2010թթ. իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ քրեական վարույթը եւ վարչական վարույթն իրականացվում են միմյանցից անջատ, եւ խնդրո առարկա զանցանքի համար պատասխանատվության վարույթը հարուցվում է քրեական գործով վարույթի ավարտից եւ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում կայացնելուց հետո միայն:

Նաշվի առնելով, որ դիմողի մատնանշած գործելակերպը չի հանդիսանում ձեւավորված իրավակիրառական պրակտիկա՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմի՝ ՆՆ Սահմանադրության 5-րդ հոդվածին ենթադրյալ հակասության վերաբերյալ պնդմամբ դիմողը բարձրացնում է ոչ թե իրավա-

կիրառական պրակտիկայի իրավազափոխության, այլ իր առնչությամբ կայացված «Քրեական գործի հարուցումը մերժելու եւ վարչական փույժ նշանակելու մասին» որոշման իրավազափոխության հարց, ինչի լուծումը դուրս է սահմանադրական դատարարության շրջանակից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՆՆ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**